



Ministry of Territorial
Administration and
Development of the
Republic of Armenia



Implemented by
giz Deutsche Gesellschaft
für Internationale
Zusammenarbeit (GIZ) GmbH



Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun svizra

Swiss Agency for Development
and Cooperation SDC

Համայնքի զարգացման հեռանկարը



Եղեգիս

Եղեգիսը վաղը՝

- Տուրիզմի ոլորտը գրանցել է զգալի առաջընթաց: Համայնքում գործում են միջազգային չափանիշներին համապատասխան հյուրատներ: Վարդահովիտում զարգացած է ձմեռային տուրիզմը: Ցախ քարից դեպի Սմբատաբերդ կառուցվել է ճոպանուղի:
- Զարգացած են խոշոր եղջերավոր անասնապահությունը, այծաբուծությունը և ոչխարաբուծությունը (տոհմային կենդանիներ, ժամանակակից գոմային պայմաններ), առկա է հագեցած մեքենատրակտորային պարկ, զարգացած է մեղվաբուծությունը: Հիմնվել են ընկյուզի մեծաքանակ այգիներ:
- Գործում են գյուղմթերքի՝ կաթի, մրգերի և խոտաբույսերի վերամշակման արտադրամասեր (չիր, պահածո, կաթնամթերք, թեյ և այլն):
- Այլընտրանքային էներգիայի կայաններ և արդյունաբերական փոքր ձեռնարկություններ կան (տեքստիլ, կոշիկ, կաշի և այլն):
- Դպրոցները վերանորոգված են և ջեռուցվում են, նոր ուսումնական մեթոդ է կիրառվում, որն ավելի պրակտիկ է: Ուսուցիչներն ունեն բարձր որակավորում և բարձր աշխատավարձ են ստանում:
- Գործում են անվճար տարբեր խմբակներ (օտար լեզուներ, պար, երգ և այլն): Գործում է մարզադպրոց:
- Շատինի բժշկական կենտրոնը հագեցած է նոր ժամանակակից սարքավորումներով և վերապատրաստված բուժաշխատակազմով: Առողջապահությունն անվճար է:
- Բնակավայրերը գազաֆիկացված են:
- Մարդը հանդիսանում է պետության մի մասնիկը, պետության և համայնքի զարգացումը տեսնում է իր պատշաճ աշխատանքի մեջ:

Նպատակներ

ՏԻՄ կարողությունների զարգացում

Գործողություն	Պատասխանատու
Տեղական բյուջեի ճիշտ ձևավորում, արհեստավարժ մասնագետների ներգրավում	Աջակից կառույցներ, ՏԻՄ
Համայնքի հարկերի արդյունավետ հավաքագրում	ՏԻՄ
Ներդրումային ծրագրերի կազմման և ներկայացման հմտությունների զարգացում, ծրագրերի ներկայացում ֆինանսավորող կառույցներին և դրսում ապրող համայնքի բնակիչներին	ՏԻՄ, աջակից կառույցներ
Գույքահարկի մասին օրենքում փոփոխության կատարում, որը թույլ չի տա առանց հողի, շենքի և այլ հարկային պարտավորությունները կատարելու վճարել ավտոմեքենաների գույքահարկը	Կառավարություն
Հետևողական վերահսկողություն բոլոր պետական հիմնարկների և ձեռնարկությունների աշխատանքի նկատմամբ	Կառավարություն

Գյուղատնտեսության զարգացում

Գործողություն	Պատասխանատու
Գյուղատնտեսության սուբսիդավորում, էժան կամ անտոկոս վարկեր՝ գյուղատնտեսությունը զարգացնելու համար	Կառավարություն
Ֆերմերների գործունեությունը հեշտացնող օրենքների մշակում	Կառավարություն